ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 820, www.court.am

N ԴԴ-2-Ե- 4944

«22» հունիսի 2026թ.

«ԱՆՏԱՐԵՍ» ՍՊԸ-Ի ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Մարտիրոսյան,

Սույնով ծանուցում եմ, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների գիրք-ընտրանիների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/09» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ հետևյալ անհամապատասխանությունները.

«ԱՆՏԱՐԵՍ» ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (այսուհետ՝ դիմում հայտարարություն) (Հավելված N 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ դիմում հայտարարության երրորդ նախադասությունում մասնակցի գործունեության հասցեն նշված է թերի (ոչ ամբողջական): Միաժամանակ դիմում հայտարարությունում անհրաժեշտ է հստակեցնել մասնակցի ղեկավարի պաշտոնը:
- ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ում անհրաժեշտ է հստակեցնել մասնակցի ղեկավարի պաշտոնը:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/09» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11-րդ կետը՝ առաջարկում եմ մինչև սույն թվականի **հունիսի 23-ը ներառյալ** eauction.armeps.am համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնում եմ, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում Ձեր հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

Հարգանքով,
ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝

ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/09» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Գ. Դադիվանյան
Հեռ.՝ (+37410) 511-783, 511-788